



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ  
ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Արովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. hsuugt abovyan.kotayq@mta.gov.am

10-ը դեկտեմբերի 2022թ

**ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ  
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**

ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը ընդունվել է 1948թ. դեկտեմբերի 10-ին. ամեն տարի այս օրն ամբողջ աշխարհում նշվում է որպես մարդու իրավունքների միջազգային օր:

Բոլոր մարդիկ, առանց որևէ խտրականության ունեն իրավունքներ և հիմնարար ազատություններ, որոնց պաշտպանության երաշխավորն առաջին հերթին պետությունն է և համապատասխան կառույցները: Որպես ՄԱԿ-ի անդամ երկիր՝ Հայաստանը և յուրաքանչյուրս տեղում կարևորում ենք մեր հասարակության մեջ մարդու արժանապատվության նկատմամբ հարգանքի դրսևորումը և մարդու իրավունքների պաշտպանությունը: Վստահ եմ՝ միմյանց նկատմամբ հանդուրժող և հարգալից վերաբերմունք դրսևորելով, յուրաքանչյուր քաղաքացի կնպաստի իրավահավասար և մարդակենտրոն հանրության կայացմանը:

Խորհրդանշական պատահականությամբ դեկտեմբերի 10-ը նաև Արցախի անկախության հանրաքվեի անցկացման և Արցախի Սահմանադրության ընդունման օրն է, այս առումով տեղին է շեշտել հայ ժողովրդի, հատկապես արցախահայության նկատմամբ մարդու իրավունքների և միջազգային մարդասիրական իրավունքի այն բազմաթիվ կոպիտ խախտումների մասին, որոնք արձանագրվել են պատերազմական և հետպատերազմյան շրջանում:

Սիրելի՛ հայրենակիցներ.

Մարդու իրավունքների միջազգային օրվա առթիվ շնորհավորում եմ բոլորիս, հատկապես ոլորտին առնչվող կառույցներին, մաղթում եմ՝ համատեղ ուժերով հասնենք խաղաղ, համերաշխ, հանդուրժող և իրավահավասար հասարակության ստեղծմանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ